ԱՐԾԻՎՆ ՈՒ ԿԱՂՆԻՆ

Եղավ՝ մի անգամ անտառի միջին
Արծիվն ու Կաղնին էսպես վիճեցին,
Թե ո՛րն իրենցից շատ տարի կապրի,
Ո՛րն է դիմացկուն ու պինդ ավելի։
5 Արծիվն ասավ՝ ես. Կաղնին էլ թե՝ ես։
Երկուսն էլ համառ ու հըպարտ էսպես՝
Մեծ-մեծ պարծեցան, սաստիկ վիճեցին,
Վերջը էս տեսակ պայման կապեցին։
Ժամանակ դըրին հինգհարյուր տարի
10 Արքան հավքերի, արքան անտառի,
Որ թե որոշված էն օրին հասնեն,
Էն օրը մին էլ գան իրար տեսնեն։
Ու Արծիվն իսկույն Կաղնուց հեռացավ,
Հըզոր թևերը շարժեց, վերացավ
15 Դեպի ամպերը, դեպ ժայռերը,
Ուր անց է կացնում իր լավ օրերը։
Կաղնին էլ փըռեց ճյուղերն երկաթի,
Խո՛ր ու խոր մխեց ճանկերն արմատի
Ու էնպես հուժկու կանգնեց անտառում,
20 Որ վայր չընկնի էլ հինգհարյուր տարում։
Դարե՛ր անց կացան։ Եվ ահա մի օր
Արծիվը եկավ ծերացած, անզոր,
Ծըվոցը կըտրած, տըկար, հևալով,
Թույլ-թույլ թևերը հազիվ քարշ տալով
25 Տեղ հասավ մի կերպ, նայեց դես ու դեն,
Տեսավ, որ Կաղնին ընկել էր արդեն.
Ճյուղերը թեև դեռ թարմ ու կանաչ,

Ընկել էր ահեղ փոթորկի առաջ։
— Հե՛յ, կանչեց. գոռոզ, պարծենկո՛տ Կաղնի,
Դե լավ ճանաչիր ինձ ու քեզ հիմի.
Հինգհարյուր տարուց մի ժամ էլ դեռ կա,
Ընկել ես արդեն, անկոտրում հըսկա։
— Հինգհարյուր տարի ապրել եմ կանգնած,
Էդքան էլ կապրեմ դեռ էսպես թիկնած,
Մինչև լըրանա մի հազար տարին։
Պատասխան տըվավ ընկած վիթխարին։